# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Կոտայքկոշ ԲԲԸ-ն ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/47 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Կոտայքկոշ | Ռե-Ֆորմզ | - | Կոտայքկոշ ԲԲԸ | Բանվորական արտահագուստ (կարճ բաճկոն և կիսակոմբինեզոն): Արտահագուստը բաղկացած է կարճ բաճկոնից և կիսակոմբինեզոնից: Կտորի հիմնական գույնը սև կամ մուգ կապույտ(մնացած գույները համաձայնեցնել պատվիրատուի հետ): Աշխատանքային արտահագուստը պետք է կարվի բամբակապոլիէսթերային յուղակայուն, ջրակայուն կտորից: Ներսի նյութը առանց բրդացման և ջերմամեկուսիչ շերտի: Կտորի բաղադրությունը 20% բամբակ, 80% պոլիեսթեր, մակերեսային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | խտությունը ոչ պակաս 210 գ/մ$^2$: Թելերի քանակը 10 սմ վրա ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 430 - 475 (±5), ըստ միջնաթելի 175 – 210 ( ±5), կտորի ջրամեկուսացման ելակետային տվյալը պետք է կազմի ոչ պակաս 2,000 ՊԱ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ոչ պակաս 1,800 ՊԱ: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը 600 ցելսիուս ջերմաստիճանով թաց մշակումից հետո ըստ հիմքի կազմի ոչ ավել -3,5%, ըստ միջնաթելի ±2,5%, կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 2000 Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 500 Ն, կտորի յուղակայունությունը նախնական տեսքում պետք է կազմի 5 բալ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո յուղակայունության ցուցանիշը չպետք է փոխվի: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի պետք է կազմի ոչ ավել ± 2.0 %, ըստ միջնաթելի ոչ ավել ± 2.0 %: Արտահագուստի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով, բոլոր վրադիր գրպանների, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կափույրների միացման հատվածներում պետք է լինեն ամրակարեր: Կարճ բաճկոնը ծալովի օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ տեսականու չափսի մասին նշումով, թևքերը` երկարաթև, դաստակի հատվածում մանժետ 3,5 - 5,5 սմ լայնության, որը կոճկվում է կոճակներով կամ էլաստիկ ժապավենով (ռեզին): Կարճ բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանվող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով, որի հանգույցի խաչաձև ամրությունը 600 Ն, իսկ վերին սահմանափակիչների ամրությունը 200 Ն: Բաճկոնի վրա առկա են 4 գրպան` 2-ը ներքևի հատվածում, 2-ը կրծքավանդակի հատվածում և փակվում են կպչուն ժապավենով: Կրծքավանդակի, մեջքի և թևերի միջնամասում կարված լինի A որակի 50 մմ լայնությամբ լուսանրադարձնող ժապավեն: Կարճ բաճկոնի մեջքի մասում, բարձրորակ տպագրական ներկով, տպագրված լինի պատվիրատուի լոգոն 25 x 15 սմ չափի: Կարճ բաճկոնը գոտկատեղի հատվածում պետք է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ունենա էլաստիկ ժապավեն (ռեզին), բաճկոնի չափսն կարգավորելու համար: Կիսակոմբինեզոնը ուղիղ ձևվածքի: Մեջքի գոտկատեղի հատվածում կա էլաստիկ ժապավեն (ռեզին), նախատեսված տաբատի չափսն կարգավորելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և աջ կողային կոճակներով: Կապիչները (բրետելները) պլաստիկ ֆաստեքս ամրակներով, էլաստիկ ռեզինի միջոցով երկարությունը կարգավորելու համար: Կիսակոմբինեզոնի ծնկամասերից ներքևի հատվածներում կարված լինի A որակի 50 մմ լայնությամբ լուսանրադարձնող ժապավեններ: Կիսակոմբինեզոնը ունի բազմաֆունկցիոնալ գրպաններ: Կողային 2(երկու) ներկարված գրպաններով, ծնկային հատվածում տեղադրված 1(մեկ) վրադիր ծավալային ձևավոր գրպան կափույրով(վրադիր գրպանի բարձրությունը ոչ պակաս 21 սմ, լայնությունը՝ ոչ պակաս 18 սմ) և կրցքամասում 1(մեկ) վրադիր ծավալային, ձևավոր գրպան կափույրով: Փաթեթավորումը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի մեջ 1(մեկ) կոմպլեկտ, տոպրակները պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը: Մատակարարումը իրականացնում է հաղթող մասնակիցը: Ըստ Հավելված 1-ի ներկայացված է անհրաժեշտ բանվորական արտահագուստի տեսքը և քանակը ըստ չափսերի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ОАО Котайккош в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/47 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | - | | |